ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության հայտի վերաբերյալ հանրային քննարկում /4-րդ լսում/

Վեդի համայնք, գ. Շաղափ **05.12.2024թ.**

2024 թվականի դեկտեմբերի 5-ին, ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքի Շաղափ բնակավայրի վարչական շենքում (գ.Շաղափ,Արարատյան 17) տեղի ունեցավ «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի հանքարդյունաբերման, շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության հայտի վերաբերյալ հանրային քննարկում /4-րդ լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Շաղափ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Առաքելյանը, «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊ ընկերության Տնօրեն՝ Ն. Ասլանյանը, փորձագետ, նախագծող՝ Մ. Հարությունյանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Հ. Մեսրոպյանը, ինչպես նաև համայնքի բնակիչներ և այլ մասնակիցներ:

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը: Վերջինս հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության հայտի վերաբերյալ հանրային քննարկում /4-րդ լսում/:

Հաջորդիվ հայտարարեց, որ ղեկավարվելով կարգի դրույթներով Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկման պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և վերջինս հանդես եկավ խոսքով :

Հաջորդիվ խոսքը փոխանցվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Հ. Մեսրոպյանին: Վերջինս նշեց, որ այսօրվա՝4-րդ հանրային քննարկման /լսման/ վերաբերյալ հայտարարությունը տպագրվել է Առավոտ օրաթերթում: Փորձագետ՝ Հ.Մեսրոպյանը ներկայացրեց նախորդ երեք հանրային քննարկումների /լսում/ վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես ուշադրություն դարձնելով տարբեր գերատեսչություններից ստացված պատասխաններին և դիրքորոշումներին: Փորձագետը միաժամանակ նշեց, որ վերը նշված գործունեության վերաբերյալ առկա է դիրքորոշում, որ 4.5մլն. ՀՀ դրամը նախատեսվելիք ռեկուլտիվացիայի՝ հողաշերտի մակերեսի բարելավման համար արդյոք բավարար է՝ մի գուցե վերանայվի: Զեկուցողը հայտնեց, որ ընկերության կողմից հայցվող տարածքը Շաղափ բնակավայրից գտնվում է 4 կմ. հեռավորության վրա, մակերեսը կազմում է 10,8 հա:

Ընկերությանը հետաքրքրող տարածքում տրավերտինի պաշարները կազմում են մոտավորապես 1,5 միլիոն խորանարդ մետր: Հանքավայրի տարեկան արտադրողականությունը կլինի մոտ 78947,0 հազար խորանարդ մետր: Ընկերությանը հետաքրքրող հողերը երկրագործության վարման համար պիտանի չեն՝ արոտավայրեր են: Աշխատանքները նախագծվում են 19 տարի ժամկետով:

Հաջորդիվ ելույթ ունեցավ փորձագետ, նախագծող՝ Մ. Հարությունյանը և հայտնեց, որ ընկերության կողմից հանքարդյունահանման աշխատանքները իրականացվելու են լեռնատեխնիկական միջոցներով /սղոցում/, պայթեցման աշխատանքներ չեն լինելու: Փորձագետ, նախագծող՝ Մ. Հարությունյանը իր խոսքում անրադարձավ ռեկուլտիվացման աշխատանքներին, հայտնելով, որ վերը նշված աշխատանքների համար նախատեսված գումարի չափը կքննարկվի: Ընկերությունը պատրաստվում է

...ի մշակումից հետ առաջացած երկրորդական և երրորդական մնացորդները օգտագործել որպես ...մենտի, ավազի և շեբենի հումք:

Հաջորդիվ հարց ուղղեց Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Առաքելյանը, հումքի արդյունահանումից հետո հողի անհարթ մակերեսները ուղղվելու են արդյոք թե ոչ:

Հարցին պատասխանեց ընկերության փորձագետ, նախագծող՝ Մ. Հարությունյանը, ռեկուլտիվացիան հենց դա է նշանակում:

Հաջորդիվ հարց ուղղեց Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի բնակիչ՝ Գագիկ Հուսիկյանը, ճանապարհների վերանորոգում, բարեկարգում լինելու է արդյոք Ընկերության կողմից:

Հարցին պատասխանեց Ընկերության տնօրեն՝ Ն. Ասլանյանը, վերջինս հայտնեց, որ ճանապարհների հարցը կհամաձայնեցվի և կքննարկվի համայնքապետարանի հետ:

Հաջորդիվ հարց ուղղեց Վեդի համայնքի համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝Վահրամ Ծատուրյանը, Ընկերությունը արդյոք կունենա սեփական ջրաղբյուր թե ոչ:

Հարցին պատասխանեց Ընկերության տնօրեն Ն. Ասլանյանը , այո կլինի սեփական ջրաղբյուր և ավելացած ջուրը կօգտագործեն գյուղի բնակիչները:

Նախագահողը հարց ուղղեց լսման մասնակիցներին, թե արդյո՞ք ազդակիր Վեդի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ ազդակիր Վեդի համայնքի ներկայացուցիչները հավանություն են տալիս «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 2 թերթ և հանրային քննարկման տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ / / Ռ. Հակոբյան

Ձեռնարկող՝ «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ -ի տնօրեն՝ / / Ն. Ասլանյան

Պատասխանատու՝ / / Շ. Բաքոյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

2024 թվականի դեկտեմբերի 5-ին, ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքի Շաղափ բնակավայրի վարչական շենքում (գ.Շաղափ,Արարատյան 17) տեղի ունեցող «Ս.Տ ՍԹՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Շաղափ բնակավայրի տրավերտինների հանքավայրի հանքարդյունաբերման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում /4-րդ լսում/:

Վեդի համայնք գ. Շաղափ 05.12.2024 թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible]	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]		
16.	[illegible]	[illegible]	
17.	[illegible]	[illegible]	
18.	[illegible]	[illegible]	
19.	[illegible]	[illegible]	
20.	[illegible]	[illegible]	
21.	[illegible]		

22.	[illegible]	[illegible]	[illegible]
23.	[illegible]	ST STOU [illegible]	[illegible]
24.	[illegible]	[illegible]	[illegible]
25.	[illegible]	[illegible]	[illegible]
26.	[illegible]	[illegible]	[illegible]
27.	[illegible]	[illegible]	[illegible]
28.	[illegible]	[illegible]	[illegible]
29.	[illegible]	[illegible]	[illegible]
30.	[illegible]	[illegible]	[illegible]
31.	[illegible]	[illegible]	[illegible]
32.	[illegible]	[illegible]	[illegible]
33.			
34.			
35.			
36.			
37.			
38.			
39.			
40.			
41.			
42.			
43.			
44.			
45.			
46.			
47.			
48.			
49.			
50.			